Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 78 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ ՍՈԹՔՈՒՄ»

1.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	2022 թվականի ընթացքում ռազմական գործողությունների հետևանքով Գեղարքունիքի մարզի Սոթք համայնքում վնասված բնակելի տների վերակառուցում
2.	Ծրագրի նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից
3.	Բարեգործը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ձահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481)
4.	Ծրագրի կատարողը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ձահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, Սոթք համայնք, քաղաքաշինության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	235.500.000 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սոթք համայնքը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի հունվարի 30-ից մինչև 2023 թվականի հուլիսի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Սոթք համայնքի թվով 148 տների 24,000 քմ տանիքների և պատերի վերակառուցման համար անհրաժեշտ նյութերի (գունավոր թիթեղ և արագամաշ նյութեր) ձեռքբերում՝ 125,000,000 դրամ: 2. Տանիքների և պատերի վերակառուցման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացում՝ 110,500,000 դրամ: Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև 2023 թվականի հունիս 31-ը:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Սոթք համայնքի թվով 148 տների 24,000 քմ տանիքների և պատերի վերակառուցման համար անհրաժեշտ նյութերի (գունավոր թիթեղ և արագամաշ նյութեր) ձեռքբերում՝ 125,000,000 դրամ: 2. Տանիքների և պատերի վերակառուցման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացում՝ 110,500,000 դրամ: Ակնկալվում է ծառայությունների մատուցման, Հայաստանի Հանրապետության տարածքում շինարարական նյութերի և ապրանքների ձեռքբերման դիմաց հարկային արտոնություններ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սոթք համայնք
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

02.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ